## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք,
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322)
64109 , bazum.lori@mta.gov.am

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

N 016/94
*11 մարտ 2019թ.*

Կից ներկայացնում ենք Բազում համայնքի ավագանու թիվ 13-Ա, 14-Ա, 15-Ա 16-Ա որոշումները:

Առդիր 4 էջ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՄԱՐՏԻ 2019թվականի N 13-Ա

ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է

Հաստատել համայնքի ավագնու թիվ 3 արտահերթ նիստի օրակարգը

1, Թիվ 3 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

2, ՀՀ Լոռու մարզպետի կողմից 2019 թվականի 1-ին եռամսյակում իրականացված վարչական հսկողության մասին

3, Հողամասի գործառնական նշանակության փոփոխելու թույլտվություն տալու մասին

4, Համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 31-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄԻԽԱԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱԴԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՄԱՐՏԻ 2019թվականի N 14-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2019 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է

1, ՀՀ մարզպետի կողմից 2019 թվականի 1-ին եռամսյակում Բազում համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների նկատմամբ իրականացված վարչական հսկողության ժամանակ կազմված ակտի վերաբերյալ համայքի ղեկավարի հաղորդումն ընդունել ի գիտություն:

2, Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ակտում արձանագրված թերությունների և բացթողումների ուղղման և կանխարգելման ուղղությամբ:

3, Ձեռնարկված միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետին և ավագանուն:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄԻՍԱԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՑՈՒԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՄԱՐՏԻ 2019թվականի N 15-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդվածներով, պետական սեփականություն հանդիսացող հողերից Բազում համայնքին անհատույց սեփականության իրավունքով փոխանցված հողերի ՀՀ կառավարության 08.04.2004թ-ի թիվ 458-Ն որոշումով, ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ, 14-րդ, 18-րդ, 57-րդ և 59 հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածով ՏԻՄ ՀՀ օրենքի 42 հոդվածով, ՀՀ կառավարության պետական և համայնքային սեփականություն հնդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 12.04.2001թ-ի 286 որոշումը, ՀՀ Լոռու մարզպետի թիվ 01/111,5/01403-2019թ-ի հաստատված համաձայնությունը  հողամասի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ, հաստատված հողամասի հատակագիծը՝

Բազում համայնքի ավագանին որոշում է

1. Հիմք ընդունելով ՀՀ հողային օրենսգրքի դրույթները և Լոռու մարզպետի 05,03,2019 թ-ի թիվ 01/111,5/01403-2019 գրությամբ հաստատված համաձայնությունը հողամասի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ և հաստատված հողամասի հատակագիծը Բազում համայնքի վարչական տարածքում գտնվող, Էդգար Դանիելյանի սեփականությունը հանդիսացող 06-023-0234-0002 ծածկագրի 0,04055 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակավայրերի հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:
2. Գործառնական նշանակությունը փոփոխված 0,04055 հա հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
3. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄԻԽԱԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱԴԻԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՄԱՐՏԻ 2019թվականի N 16-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 31-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 3-րդ մասով՝

Բազում համայնքի ավագանին որոշում է

Լոռու մարզի Բազում համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 8-ի <<Բազում համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն ուղղակի վաճառքով օտարելու մասին>> թիվ 31-Ա որոշման մեջ կատարել լրացում և <<ուղղակի վաճառքով>> բառերից հետո լրացնել <<15050 /տասնհինգ հազար հիսուն ՀՀ դրամով>> բառերը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄԻԽԱԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԾԱՏՈՒՐՅԱՆ ԵՐԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՌԱԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ